



## ՀԱՅ ԱԻԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐՈՒ ԵԿԵՂԵՑԻ Հովի՛՛ վեր. Տիգրան Ծանկեան

Տարի 10, Թիւ 108 Սեպտեմբեր 2002

### ՕՐԻՆԱԿԵԼԻ ԵԿԵՂԵՑԻՆ

«*Դուք ալ մեզի ու Տէրոջը նմանող ըլլալով՝ ընդունեցիք խօսքը շատ նեղութեան մէջ, Հոգւոյն Սրբոյ ուրախութիւնովը. այնպէս դուք օրինակ եղաք բոլոր հաւատացեալներուն որոնք Մակեդոնիայի ու Աքքայայի մէջ են*»: Ա. Թեա. 1:6,7

Մեր ազգային բառամթերքին մէջ սխալ գործածուած բառեր ունին որոնցմէ մէկը «եկեղեցի» բառն է: Աստուծաշունչի տուած տեղեկութիւններուն լոյսին տակ, եկեղեցին շէնք չէ, վայր չէ այլ հաւաքականութիւն: Անկէ բաղկացած է ու կը բաղկանայ անձերէ որոնք փրկուած մեղատրներ են, Աստուծոյ շնորհքին արժանացած մահկանացու էակներ:

Ուստի քաջօրէն կը յայտարարենք թէ եկեղեցիին գեղեցկութիւնը շինութեանն ճիշդութիւնը չեն, ոչ շէնքին վեհութիւնը ու ոչ ալ ներքին խորհրդաւոր զարդարանքը, այլ ամոր գեղեցկութիւնը անդամներն են, անհատներ որոնք Հօրը եւ Որդւոյն մէջն են ու կը կատարարուին Հոգիով, կը պատրաստուին երկինքի համար անելով եւ օրինակ ըլլալով իրենց շուրջիներուն:

Թեաւորնիկէի եկեղեցիին ուղղուած առաջին նամակով Առաքեալը յատկօրէն կը ներկայացնէ եկեղեցին կազմող անհատներու յատկանիշները.

**1. Բարկութենէ ազատած —** 10րդ համարը այս կը ճշէ:

Ներկայիս դժուարութիւն մը կայ մեր եկեղեցիներուն մէջ, ուր քարոզները շոյող են. ասելի մարդաստանոյ քան թէ աստուածաստանոյ քարոզներ, պատգամներ որոնց կեդրոնը մարդն է եւ ոչ թէ Յիսուս Քրիստոս: Այսօր տարիներ կ'անցնին ու եկեղեցիներու մէջ փրկուողներ չկան: Ո՛ր ներողութիւն, հազար ներողութիւն, կան փրկուողներ, սակայն գործերով, մարդկային ջանքերով. չկայ Աստուածաշունչի փրկութիւնը որ կ'ազատէ անձը գալիք բարկութենէն: Սարսափելի օրեր պիտի ըլլան եւ այդ ճաշակելէ հետո մնալը կապուած է շնորհքով փրկութեան հետ, միակ միջոցը գալիք բարկութենէն ազատելու:

**2. Աստուծոյ դարձած —** 9րդ համարը այս կը յիշէ:

Եթէ բարկութենէ ազատած ենք ուրեմն Աստուծոյ դարձած ենք: Սակայն մեր կեանքներուն մէջ Աստուծոյ դառնալը չերեւիր:

Անշուշտ գիտակից ենք թէ Յիսուս Քրիստոս սիրեց աշխարհը ու իր կեանքը դրաւ աշխարհի մեղքին համար, բայց անձնապէս Աստուծոյ դառնալ պէտք է: Ամէն մարդ եւ յատկապէս ամէն հայրորդի պէտք է դառնայ կոտրելէն Աստուծոյ. անձէն,

նիպակառնել, մարդէն առարկայէն, եսի պաշտամունքէն, Ակարի պաշտամունքէն, կովու կամ մուկի պաշտամունքէն Աստուծոյ:

**3. Խօսքը ընդունած —** ճող համարը այս կը թուէ:

Թէ՛ն ժամանակները չար են ու ամէն անհատ հասանքով կը տարուի. հաստացեալը կը յատկանշուի, որպէս խօսքին համեմատ սպողոյ անձ: Աստուծոյ Խօսքը անտեսել ու մասնակի ընդունի կ'ատաջնորդէ հիւանդութեան ու մահուան: Ատողը անհատը, ատողը եկեղեցին կ'ընդունի Խօսքը: Խօսքը սնունդ է, Խօսքը ուղղութիւն է եւ մենք պէտք ունինք Աստուծոյ Խօսքին:

**4. Աստուծոյ ծառայութեան մէջ —** Զող համար:

Փրկուած անհատը ծոյլ ու անտարբեր չկրնար մնալ, այլ իր մէջ սպողոյ Հոգին, կը մղէ զինք ծառայութեան: Ծառայութիւն որուն մէջ Աստուած կը փառաւորուի ու կը հաճի: Մեր ծառայութիւնները մեզ գոհացնելու, ուրախացնելու համար չեն, ոչ ալ ուրիշին հաճելի երեսնալու համար, այլ ամէն բան Աստուծոյ փառքին համար, որպէս պտուղ մեզի շնորհուած փրկութեան: Աստուծոյ ծառայութիւնը մեծ է իւրապատուկ ասանձնաշնորհ է:

**5. Յիսուսի սպասման մէջ —** 10րդ համարը ցոյց կու տայ այս:

Ամէն օր տարբեր անորոշութիւն մը կը դիմագրաւենք. վաղը ի՞նչ պիտի ըլլայ: Տնտեսական, քաղաքական, ընկերային, ընտանեկան եւ եկեղեցական կեանքէն ներս ի՞նչ փոփոխութիւններ պիտի ըլլան: Սպասման մէջ ենք: Իրաքի վրայ յարձակում պիտի ըլլա՞յ: Սակարանը պիտի բարձրանա՞յ: Գործ պիտի ունենա՞մ:

Հաստացեալը, եկեղեցին, Յիսուսի փառատար երկրորդ գալուստին կ'ըստատէ: Ան ամէն անորոշութեանէ, ամէն ասհմանափակումէ մեզ պիտի ազատէ. Անկիսա մեր երջանիկ, օրհնեալ յուն է: Դուն Յիսուսի սպասէ:

**6. Ուրախութեան մէջ —** ճող համարը կը յիշէ այս:

Ուրախութիւնը չէ կապուած ատողութեան հետ, ոչ ալ ունենելու հետ:

Այս ուրախութիւնը որուն մասին կը խօսի Առաքեալը առնչուած է Աստուծոյ խօսքը սրտիդ մէջ ունենալու, Անոր գալուստը աչքերուդ առջեւ տեսնելու, Հոգիին գօրութիւն քու մէջդ վայելելու հետ. երբ այս է վիճակդ, այլեւս ծառայութիւնը քեզի համար բեր չէ, հասկա անող ստաջնաշնորհ:

**7. Օրինակ ուրիշներու —** 7րդ համարը այս կը յիշէ:

Եկեղեցին, ատողը եկեղեցին այսպէս ըլլալու է: Ատողը հաստացեալը այսպէս ըլլալու է, օրինակ ուրիշներուն, այս պարագային ուրիշները հեթանոսները չեն այլ ուրիշ հաստացեալներ են:

Մենք կանչուած ենք մեր շուրջը եղողներուն օրինակ ըլլալու, որպէսզի Քրիստոսով իրենք ալ շինուին, մարմնատրութեանէ ազատելով սարին հոգեաորայէս, այն աստե՛ն երկինքը երկրի վրայ կ'ըլլայ:

Դուն օրինակելի եղիր, մենք օրինակելի ըլլանք:

---

## **ԵԿԵՂԵՑԻՆ ՈՒՆԻ ՀԵՏԵԻՆԱԼ ՊԱՇՏԱՄՈՒՆՔՆԵՐԸ**

- Կիրակի -** Առաւօտեան 11-ին Պաշտամունք  
Մանուկներու Կիրակնօրեայ
- Երեքշաբթի -** Երեկոյեան 7-ին Սերտողութիւն
- Հինգշաբթի -** 7-ին Երիտասարդաց Սերտողութիւն  
8:30-ին Երգչախումբի Փորձ
- Ուրբաթ -** Առաւօտեան 10:30-ին Քոյրերու Ժողով  
7:30-ին Պատանեաց
- Շաբաթ -** Ամէն Ամսուայ Վերջին Շաբաթը Երեկոյեան  
7-ին Երիտասարդ Ջոյգերու Ժողով

# ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ՏԷՐՈՋ ՓԱՌՔԻՆ ՀԱՄԱՐ

■ Եուօթայի Արարատ Աւետարանական եկեղեցիի տարեկան համագումարը տեղի ունեցաւ Յուլիս 19, 20, 21-ի շաբաթավերջը: Մեր հովիւը հրահրուած էր պատգամաւոր: Չորս պատգամներ եղան հոգեւոր աճումի շուրջ: Ուրբաթ եկեղեցաշէնքին մէջ, Շաբաթ օր ջութի եզերքը լեռներու լանջին, ճոխ երգեցողութեամբ, կեր ու խումիլ ու երկու պատգամներով: Հոն էին Գաեա Ուրուկուէլէն Վեր. եւ Տիկին Կարապետեանները: Քաղցր հաղորդակցութեան պահեր ունեցանք: Կիրակի, Տէրունական օրուայ պաշտամունքին Մկօ Գրիգորեան եւ Սեակ Շանկեան Պատանեացի կողմէ գնահատանքի գիր սը ներկայացուցին Գէորք եւ Անուշ Պարոնեաններուն, իրենց ծառայութեան համար Պատանեաց համագումարէն ներս: Սիօն քոյրը «Յիշեցոր գիս» երգը ներկայացուց սաաջին անգամ ըլլալով նուագակցութեամբ Սեակ Շանկեանի:

Վեր. Տիգրան Շանկեան փոխանցեց եզրաբակիչ պատգամը: Աստուած օրհնէ տեղական առաջնորդին, Գէորք Պարոնեանի ջանքերը: Տէրը օրհնէ սիրելի քոյրերուն պատրաստական ծառայութիւնը: Տէրը ինք հոգիներ աւեցնէ Եուօթայի եկեղեցիին վրայ:

■ Յովիսի վերջին Կիրակին մեր տարեկան մկրտութեան պաշտամունքն էր: Տէրը մեզի շնորհեց վեց հասարակացներ որոնք առաջնորդուեցան մկրտուելու՝ Արմիկը, Արմիճէն, Երուանըր, Լուսիճէն, Յասմիկը եւ Մարիան: Հովիւը, Անդրանիկ Ա.Ֆշարեանի հետ կատարեց մկրտութիւնը պատգամ սը տալէ ետք: Երգեցողութիւնը Մաքրումի քոյրը առաջնորդեց, երէց եղբայրներ աղօթեցին: Արթուր եղբայր գեղեցկօրէն նուագեց: Միասին փառասոր ճաշ ունեցանք: Ընորհակալութեան Ռուգաննա եւ Մարալ քոյրերուն ճաշի եւ տեղի համար: Եկեղեցիի հոգաբարձութեան անդամներէն Ալիս Մարկանեան, Սիօն քոյր հետ ներկայացուցին Ֆրանսիս Ապիսիի աղօթքը յիշեալ քոյրերուն որպէս գնահատանքի արտայայտութիւն: Երէցներ ու սարկաւագներ աղօթքներ մատուցին Աստուծոյ որպէսզի մկրտողներ օրհնուին եւ հաստատուին:

Վերջատրութեան ունեցանք խմբանկար եւ վկայագիրներու եւ նուէրներու տուչութիւն որոնք կատարեցին Յակոբ եւ Յովսէփ երէցները: Ընորհակալութիւն բոլոր ծառայողներուն. մկրտողներու աղօթքներն ու վկայութիւնները թրջեցին մեր աչքերը:

■ Օգոստոսի առաջին շաբաթավերջին հովիւը կրկին Եուօթա էր ընկերակցութեամբ Վեր. Յովսէփ Մաթոսեանի. Շաբաթ իրիկուն Պարոնեաններու տան մէջ քսանէ ստեղծ անհատներ կային ուր կային նորահաստներ, եղան վկայութիւններ ու Վեր. Մաթոսեան իր վկայութիւնը տալով հակիրճ պատգամ սը ներկայացուց: Կիրակի առաօտ երկու հիւրերը նախաճաշեցին Չասարեաններու հետ որոնք գործով Սոյթ Լէզ Սիթի կը գտնուէին, որոնք (Բենիամինն ու Ալիսը) Տաւուզի Հայ Էմմանուէլ Ժողովական եկեղեցիին կը պատկանին: Երկու Հովիւներ անոնց հիւրը ըլլալէ ետք միասին եկան եկեղեցիի ժամը 1-ի պաշտամունքին: Պատգամաբերը կրկին Վեր. Մաթոսեանն էր: Երիտասարդ Կարէնը Նաթալիի բացակայութեան նուագեց:

■ Շաբաթամիջի սերտողութեան Մաղաքիայ մարգարէութիւնը վերջացուցինք. Տէրը կամի կրկնակից Յայտութիւնը:

■ Սեպտեմբեր 11-ին Գէորք Պարոնեան, Եուօթայի առաջնորդը հոգեւոր այցելութեամբ Հայաստան պիտի մեկնի Մոսկուայի ճամբով ու պիտի ծառայէ Արարատի մարգի եկեղեցիներուն ու վերադառնալ 24-ին: Աղօթեմք մեր եղբորը համար: Իր բացակայութեան Եուօթայի եկեղեցիին պիտի պատգամէ մեր հովիւը ու եղբայրներէն մէկը:

## ԻՄԱՍՏՈՒՆ ԽՕՍՔԵՐ

- ◆ *Աստուած երկինքէն եկեղեցիներ չ'դրկեր, այլ մեր սրտերով պէտք է բարձրանայ:*
- ◆ *Եկեղեցին շատ քննադատողներ ունի բայց ոչ սըցակիցներ:*
- ◆ *Այն եկեղեցին որ կը փոխէ ճշմարտութիւնը ապօր, վկայը պիտի փոխէ բարոյականութեան չափանիշը:*
- ◆ *Եկեղեցիներ խոնարհութիւնը պէտք է սորվին եւ սորվեցնեն:*

# ՄԵՋ ՀԱՅ-ՔՐԻՍՏՈՆԻԱ ԵՆ ԱՍՈՒՄ

Ո՛վ Տեր. Աստված դու գերիշխան  
Հեղինակը ստեղծագործության,  
Դու մարդասեր հզոր Տիտան  
Դու թագավոր ողջ մարդկության,  
Որ սիրեցիր ազգն Հայկական  
Ու ընտրեցիր Քե՛զ ծառայեն  
Կոչումով միսիոնարական՝  
Որ բարի լուրը տարածեն  
Աշխարհով մեկ ավետեն  
Սիրող սիրտդ բացահայտեն  
Հարությունդ վկայեն  
Երորդությունդ փաստեն  
Սուրբ անունդ հռչակեն  
Ողջ աշխարհին հայտարարեն  
Որ Աստվածն ես հավիտենից  
Որ էր որ է ու պիտի գա:  
Ու ծունկ ծոած Քե՛զ աղոթենք  
Քեզի պաշտոն մատուցանենք  
Սրտի խորքից Քե՛զ մեծարենք  
Ու սուրբ կյանքով փառաբանենք.  
Այսօր Հայ ազգով միաբան  
Ժողովքների մեջ սրբազան  
Ք՛ո անունդ ենք բարձրացնում  
Քեզ շնորհակալություն հայտնում  
Որ սիրեցիր, մեզ ընտրեցիր...  
Ու երբ ակնառու նշաններն  
Աշխարհի վերջ ազդարարում  
Մեր այս կյո՛ր երկրագնդում  
Մե՛զ Հայ-Քրիստոնյա են ասում  
Ով բարձրյալ Սուրբ Տեր Աստված  
Քեզի լինի բյուր փառք  
Պատիվ ու գորություն  
Հի՛մա ու միշտ... ու հավիտյան:

Նարինե Սարգսյան  
Երեսան

---

## Armenian Evangelical Brethren Church

3200 London St., Los Angeles, CA 90026

(213) 483-7265 / Fax (213) 483-7002

Internet: [www.aebcm.org](http://www.aebcm.org) – E-mail: [aebcministries@aol.com](mailto:aebcministries@aol.com)